



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5053

2809

Հ. Յ. ԴԱՎԻԴՅԱՆԻ ԹԱԳԻ

# ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ

ՎԱՐԴԱՆ ԳՈԼԾԵԱՆ

Յ. ԱԳՐԻՊԱՍԵԱՆ

ՏԱՐԱՎԻ ԱՐԱՐԱՆ  
ԴԱՎԻԴՅԱՆԻ ԹԱԳԻ

1905  
Ժ. Բ. Կ. Ե. Վ.

9(47.925)  
Հ - 76

№ 2809

3(47.925)

76

2011-19

Հ. Յ. ԴԱՏԵԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԵՐ

I      II

ՎԱՐԴԱՆ ԳՈԼՈՅԵԱՆ

Յ. ԱԳՐԻՊԱՆԵԱՆ

Գրեց Ս. ՍԻՐԱԿԱՆԾԱՆ (ԺԵՐԱՄԻ)

ՏՊԱՐԱՆ  
ԴԱՏԵԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1905  
Ժ. Բ. Ն. Ե. Վ.

6053

Ա

Մի նոր գարագլուխ էր բացւում հայութեան համար 80-ական թականներին։ Մի շօջան՝ վերին աստիճանի յուսալի՝ իր բովանդակութեամբ, առողջ՝ իր հիմունքներով։ Մի սկզբնաւորութիւն, որ գալիս էր լրացնելու մեր կեանքի ամենախոշոր, ամենազգալի պարապներից մէկը։

Հայկական վերածնութեան շարժումը իր հետ կապված երևոյթներով չէր ունենայ իրական, հաստատուն հող եթէ հայութիւնը միշտ գերի մնար զանազան բռնակալների ձեռքում։ Դպրոցական, կրթական, գրական առաջադիմութիւնները չէին կարող լինել յարատեռ ապահով, եթէ դրանց չը յաջորդէր քաղաքական վերածնութեան գաղափարը — ազատագրական մի հռանք, որ նախնի բոլոր հոսանքներից աւելի բարձր էր, աւելի նշանաւոր։

Նա պիտի մեծացնէր սրտերը, պիտի բարձրացնէր հայ ժողովրդի հոգեկան-բարոյական մակերեսյթը, պիտի մաքրէր դարերի ընթացքում նրա վրայ ծանրացած կեղատերը, ժանդը սկը, պիտի առաջնորդէր դէպի անկախութիւնը ու ազատութիւն։

Այդ սկզբնաւորութիւնը, որ գժուարին գործի դըժարագոյն մասն է, ունեցաւ իր հերոսամիպ հեղինակները, հայ յեղափոխական շարժման ոահվերաները — որոնք իրենց արտակարգ խառնւածքով գերզգայուն բնաւորութեամբ՝ համեմատաբար շուտ լմբունեցին հայի տիսուր ճակատագիրը և միակ, անխուսափելի ելքը . . .



Նրիտասարդական ջլայնութեամբ ու բուռն թափով նետեցին նրանք յեղափոխական փշոտ ճանապարհը՝ մի անգամ ընդմիշտ հասկացած լինելով պատմական անժխտելի ճշմարտութիւնը՝ որ փոքրամասնութեան դիակների վրայ է ծլում ու ծաղկում ժողովուրդների ազատութիւնը...

\* \* \*

Վարդան Գօլօշեան մէկն էր այդ նախակարապեաներից: Կա ծնւել է Թիֆլիսում 1867 թւի հոկտեմբերի 25-ին: Մի համեստ ընտանիքի զաւակ էր և այդ ընտանիքի սիրելին: Նրա թողած նամակներից և մի քանի փոքրիկ ոտանաւորներից կարելի է տեսնել այն մեծ ազգեցութիւնը, որ ունեցել են նրա հոգեկան կազմի վրայ էր այնքան սիրելի ծնողները:

Ամեն տեղ ամեն մի երկտողում ձեր առջև կանգնում է սիրող որդին՝ անհօւն կարօտով լեցուն դէպի իր հարազատները... Գիշերային խաւարի մէջ, դուշման սարերի ստորոտում թափառելիս՝ լուսմ է նա շարունակ իր մօր յուսահատ հեկեկանիքը՝ „ուր է զաւակս“... Վշտացած մօր ուրուականը հալածում է նրան իր պանդիստութեան միջոցին — Պարսկաստանում, Վասպուրականի ու Տարոնի ձորերում: Աօր էութիւնը, կարելի է ասել, ապրում էր Գօլօշեանի սրտի խորքերում...

Սօտ 12 տարեկան հասակում, 1877-1879 թ. մենք նրան տեսնում ենք ներսիսեան դպրանոցում: Այնուհետեւ մի տարւայ պատրաստութիւնից յետոյ նա երեսում է թիֆլիսի գիմնազիոններից մինում, ուր և մնում է մինչև 1882 թ.: Դեռ ևս պատանի էր Գօլօշեանը, բայց այդ հասակում նա արդէն կրեց իր ժամանակի խոր ազդեցու-

թիւնը: Իսկ ժամանակը այնքամ հարուստ էր տպաւորութիւններով ու երազանքներով... Առուս-թիւլքական պատերազմից և բալկանեան ազգերի ապստամբութիւնից յետոյ՝ մի անսովոր ոգեսրութիւն էր տիրում Կովկասի հայ ըրջաններում... Հայ լրագրութեան մէջ անենդային կերպով արծարծւում էր հայկական հարցը. Հայ թատրոնի մէջ հանդէս էին գալիս թիւրքահայ մշակները իրենց „քօլօզով“, իրենց վիճակի բոլոր թշւառութեամբ: Բեմից մշեցի պանդուխտը իր յուսահատ հառաշանկներով ու աղխողորմ բացագանչութիւններով արտասուր էր քամում հանգիստականների աչքերից...

Հայ բանաստեղծները երգում էին մօտալուս ազատութեան արշալոյսը. Հայ վիպասանութիւնը յանձին բաֆֆիի՝ ծրագիրներ էր տալիս՝ այդ ապատութիւնը իրագործելու համար: Մանել Թիւրքահայաստան, զինել ժողովուրդը, զարկ տալ ապստամբութեամ՝ աղաս Հայաստան ունենալու համար,— ահա թէ ինչ էր ասում Բաֆֆին...

Գրական այս շարժումը շուտով գործնական կերպարանք ընդունեց, և կովկասահայ երիտասարդներից սմանք բռնեցին այդ ճակատագրական ուղին: Իբր գործնական յեղափոխական, այդ ըրջանում նշանաւոր էր մեր ըմբուտացման անդրանիկ զաւակներից մինը՝ Թօխմախնեանը: Բնիկ վանեցի, լաւ ծանօթ թիւրքահայերի տառապանքներին, նա թափառում էր ամեն տեղ, պրօպագանդ էր անում, ստւարացնում էր կուող երիտասարդների թիւը...

Ահա այսպիսի մի եռուն ժամանակի մէջ էր ապրում պատանի Գօլօշեանը, մի ժամանակ, որի անմիջական ազգեցութիւնները նրա վրայ անուրանալի են: Հոգեկան

Հազւագիւտ թռիչքների տէր, տրամադիր սեփականացնելու լաւագոյն առաքինութիւնները՝ Գօլօշեան շատ բան ստացաւ նաև տիրող տրամադրութիւնից ու բաֆֆիի վէպերի ընթեցումից: Որ „Կայծեր“ի ստեղծագործողը ահագին ազգեցութիւն է ունեցել Գօլօշեանի վրայ, դա երեւում է նրա հետեւեալ նամակից:

..... Պատանեկութեանս հասակում մեր գրական ասպարիգում փայլում էր բաֆֆին. այդ համակրելի մարդու գործունէութիւնը ղեկավարում էր մի մեծ գաղափար՝ Հայաստանի պատութեան գաղափարը: Նրա ընթեցանութիւնը ներջնէց ինձ վառ ու ազնիւ սէր գէպի ազգ ու հայրենիք դէպի տառապեալ հայութիւնը” . . .

Այս վառ ու ազնիւ սէրն էր ահա, որ նա ստացաւ թիվլիսում: Հոգեկան ու բարյական այսպիսի կազմով՝ 15 տարեկան պատանի Գօլօշեանը 1882-ին դուրս եկաւ կովկասից՝ Մոսկվայի Լազարեան ճեմարանը գնալու համար:

Բարեբախտաբար Լազարեան ճեմարանի պարագաները այնպէս չէին դասաւորւած, որ կարողանալին վատ աղդեցութիւն ունենալ վառվուոն և տպաւորւող պատանու հոգեկանի վրայ: Թէև Գօլօշեան ընդհանրապէս շատ գժգոհ էր դպրոցում տիրող ուղղութիւնից, թէև շատ անգամ էր նա երեւան հանում իր նամակներում ուսուցեների և դաստիարակների անմարդասէր, կոպիտ վարմունքը, աշակերտների ստրկական վիճակը, ճշմարիտ ու տիպար մանկավարժութեան բացակայութիւնը — այնուամենայնիւ կեանքը լազարեանների հիմնած դպրոցում այնպիսի պայմանների մէջ էր գտնուում ընդհանրապէս, որից միայն օգտւել կարող էր հայ յեղափոխութեան անդրանիկ զինուորներից մինը:

Հայաստան՝ մշտական արհաւիրքների մէջ ապրած

ազգի բնակավայրը, ասես, մի կախարդական գաւաղանով այստեղ էր տեղափոխւել հարիւրաւոր հայաստանցի մանուկների միջոցով: Դպրոցական այդ յարկի տակ իրար կողքի նստում էին ղարաբաղցին ու նորջուղայեցին, քովկովի ապրում, մնում էին գանձակեցի, երևանցի, կարնեցի հայ պատանիները: Աստանդական ժողովրդի տարագիր որդիները այստեղ էին հանգչում իրար մօտ, հարազատների ըրջանում: Ու հաւաբւում, պատմում էին միեւնաց հայրենէիքի ցաւերը, զըուցում էին հայ գեղջուկի անտանելի կացութեան մասին:

Գրքերի թողած կարեօր պակասը Գօլօշեանը միայն այդպիսի պարագաներում կարող էր լրացնել: Միւս կողմից չպիտի մոռնանք նաև այն, որ իր բոլոր պակասութիւններով հանդերձ, լազարեան ճեմարանը ներկայացնում էր մի հիմնարկութիւն, ուր այնքան խնամքով աւանդում էին հայի արիւնոտ պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, ուր այնքան հոգատարութեամբ պահում էին անցեալ կեանքի պայծառ աւանդներն ու ներական յիշատակները, որտեղից շարունակ գուրս էին գաւլս մեր պատմական ճակատագիրը խորապէս ըմբռնող ազնիւ մտքեր, մեր կեանքի սովորական, ցաւագին միակերպութիւնը վերանորոգել ձգտող մաքուր հոգիներ:

Գօլօշեանի մոսկովեան շրջապատի փոքր իշտէ ամրողական նկարագրութիւնը տալու համար՝ անհրաժեշտութիւն ենք զգում գոնէ հարեւանցի ակնարկ ձգել տեղական համալսարանական ուսանողութեան գործունէութեան վրայ: մի գործունէութիւն, որ իր անխուսափելի հետեւանքներն է ունեցել ոչ միայն մեր հերոսի, այլև հայկական կեանքի տարբեր արտայայտութիւնների մէջ: Եւրոպական հոսանքների ազգեցութեան տակ՝ երի-

տասարդ Ոռուսաստանը 60-ական թւականներին կոխւ էր յայտարարել այն բոլոր բացասական ուժերի գէմ, որոնք ձգտում էին խեղդել ժողովուրդներին, ծծել նրանց կենսական հիւմերը:

Ոռուս ժողովուրդը իր ծով թշւառութեամբ դարձել էր նոր սերնդի մտահոգութեան առարկայ: Գրականութիւնը այդ ուղղութեամբ մշակւեց, երիտասարդութեան իդէալները այդ ուղիով վարդացան: Ոռուս գիւղացին մի ճշմարիտ պաշտամունքի առարկայ էր ամեն ինչ չափուում էր նրա չափով. ամեն ինչ ուղղւած էր գէպի նրա աղքատակի խրճիթը, նրա գութանն ու արօրը: Եւ անթիւ երիտասարդ ուժեր, անձնւէր գործիչներ, կեանքի վայելքը արհամարհող ուսուցիչներ և ուսուցչուհիներ՝ գնում էին հեռաւոր ոռուս գիւղերը՝ դարմանելու համար ժողովրդի բիւրաւոր ցաւերը, տարածելու համար քաղաքակրթութեան գէթ տարրական, անհրաժեշտագոյն բարիքները: Ժողովը դասի թիւնը նոր շարժման կեանքն ու հոգին էր, ազատական հոսանքի ամենայատկանշական արտայատութիւնը:

Հայ ուսանողութիւնը չէր կարող ապրել Մոսկվայում և Պետերբուրգում բոլոր լաւագոյն ուղղութիւնների այդ նշանաւոր վայրերում, առանց խորապէս ազգւելու ուսուական կեանքի այդ գաղափարական հոսանքից, ամեն տեղ տիրած ազնիւ արամադրութիւնից: Եւ այդ ազդեցութիւնների տակ՝ Հայ ուսանողութիւնը չէր կարող չվիշել արհամարիքների մէջ հեծկատացող իր հարազատ ժողովողին:

Հայրենասիրութիւնը ուժդին թափ առաւ և նրա գրական արտայատութիւնը եղաւ „Աղատութեան շւեւ-

տարեր“ անունը կրող թերթիկը, հայ յեղափոխական անդրանիկ օրգանը:

Լազարեան ճեմարանի թանձր պատերը անկարող եղան կտրել Գօլօշեանին դրսի աշխարհից և սահմանափակել նրան դպրոցական պարապմունքներով: Ազատասէր արծւի նման նրա միտքը միշտ թռչում էր գէպի արեւելք՝ կամենալով մի անդամից լոնգրէկել հայրենի բովանդակ իրականութիւնը: Ծնողներին գրած նամակներից մինում՝ նա թախանձագին խնդրում է հաղորդել իրեն՝ թէ ե՞րբ է սպանւել թիւրքաց հիւպատուը թիֆլուում: Սակայն հակառակ իր կամքին՝ նա հարկադրւած էր մնալ ճեմարանում, որպան էլ սրա մթնոլորտը խեղդուկ լինէր նրա համար: Նա աշխատում է գոնէ անպատուղ կերպով չփատնել իր ժամանակն ու ոյժերը գրում է հայրենասիրական ոտանաւորներ և պիէսներ, որոնք, ի հարկէ, աւելի գրի անփորձ խալիք էին, քան թէ գրական գործեր: Այսպէս լինելով հանդերձ՝ Գօլօշեանի գրական անմեղ երկասիրութիւնները կարողանում էին ցանկալի տպաւորութիւն գործել Լազարեան ճեմարանի սաների վրայ, վառել նրանց մէջ հայրենասիրական կրակը: Նրա բեմական գրւածքներից ո՛չ մինը տպագրւած չէ, բայց շատերը ներկայացւած են Լազարեան ճեմարանի գպրոցական բեմի վրայ՝ ոգեսրւող ու վառվուուն աշակերտների միջոցով:

Գօլօշեանի վարաբերութիւնները իր դպրոցական ընկերների հետ շատ սիրալիք էին ու մաերմական. Թոյլ ու անկարող աշակերտների համար նա ամէն բան յանձն էր առնում: Քանի՛ բանի անդամ նա արիաբար ըմբուտացել է կոպիտ ուսուցիչների գէմ և ընկերների վիրաւորւած ու անարգւած պատիւը վերականգնել:

Նրանց համար ոչինչ չէր խնայում, ոչ ժամանակ, ոչ աշխատանք, այդ պատճառով էլ շատ սիրւած էր ընկերների ըջանում:

Դիւրին է ենթագրել ձեմարանի վարչութեան և ըմբոստ, բողոքող, ազատասէր Գօլօշեանի յարաբերութիւնների ընդհանուր կերպարանքը: Լազարեան ձեմարանում, ինչպէս և ամեն դպրոցում առհասարակ, պահանջում էր հնազանդութիւն, ոչխարային կարգապահչութիւն, անլեզու համեստութիւն, անխօս պարկեշտութիւն: Այս պահանջները ստրկացնում, գերի էին դարձնում աշակերտներին, ջնջում էին նրանց մէջ ամեն տեսակ ազատութեան տենչանք, խեղդում էին անհատականութեան զարգացումը: Գօլօշեանը գլխովին հակառակ լինելով այդպիսի կարգապահչութեան, ի բնէ թշնամի լինելով ամեն տեսակ ձնշման ու բռնութեան՝ անկարող էր հաշտ յարաբերութեան մէջ լինել ձեմարանի վարչութեան հետ: Եւ վերջինը յաձախ դիմում էր ըմբոստ պատանու հօրը զանազան գանգատաներով, ու դպրոցի նկատողութիւնների գրբոյկը լեցուն էր Գօլօշեանի „անկարգութեանց“ նկարագրութիւններով: Այս յարաբերութիւնների առիթով՝ ահա թէ նա ինչ էր գրում.

... Իսկ երբ սկսեցին ինձ չարչարել և անարգել այն ժամանակ ես ևս անկարող եղայ ինձ զսպել: Եւ միթէ ես իրաւունք չունեի այդ անել միթէ ես նոցա չունեն եմ կամ ստրուկը որ գլխակոր կանգնեմ նրանց առաջ և ասեմ: Այսում եմ հասկանում եմ պարզն:

Գօլօշեանին, վերջապէս, անտանելի դարձաւ դպրոցական կեանքը. նրան ոչինչ չէր հրապուրում: Մի քանի անգամ փորձեց ազատել խատաբարոյ արգելարանից, բայց անօգուտ: Ձեմարանի վարչութիւնը այս փորձերի առիթով գրում էր նրա հօրը՝ թէ որդին յունիսի 25-ին,

դպրոցական մի զբոսանքի ժամանակ՝ փախել և անյայտացել է ու թէ հետևեալ օրն իսկ բռնւել է սստիկանութիւնից, այնուամենայնիւ նա չէ կարող պահել դպրոցում: Տասն օրից յետոյ, յուլիսի 5-ին, Գօլօշեանը կրկնեց իր փախուստը, սակայն այս անգամ ևս բռնւեց. դրանից յետոյ ստիպւած եղաւ դպրոցական վարչութեանը բացարձակ կերպով յայտնել թէ որոշել է մի անգամ ընդմիշտ Տաճկահայաստան գնալ և յո բոլոր ազմուկներից յետոյ՝ հայրը ստիպւած եղաւ Պոսկւանը և որդուն հետը թիֆլիս տանել: Ծնողները գեռ ևս յոյսեր ունեին իրանց մոլորած որդուն խելքի բերելու և աշխատում էին յետ կանգնեցնել իր տղայական մտագրութիւններից: Նրանց ջանքերի շնորհիւ Ալեքսանդրին կրկն անգամ ընդունեցին թիֆլիսի գիմնազիօնում:

Բայց ի զուր. 1883 թուականի գեկտեմբերի 9-ին, Գօլօշեանը կրկն անգամ անյայտացաւ և այս անգամ բաւական երկար ժամանակով: Հայրական տնից հեռացաւ ձմրան ցրտերին, համարեա կիսամերկ, մի թեթև վերնազգեստի մէջ, հազիւ մի քանի կոպեկ գրպանում: Ծնողների հասցէին թողած նամակում հետեւյն էր գրում:

„Այն ընկերութիւնը, որին երգւեցի հլու ծառայ և ստրուկ լինել հրամայում է ինձ գնալ Պօլիս. ես հեղափուում եմ: գնորմ եմ առանձին անցագրով և ծպտեալ: Ուրեմն ի զուր չհետևէք. Պնաք բարեաւ.“

¶

Տասնվեց տարեկան պատանին՝ վերջիվերջոյ մղւած ներքին անդիմադրելի ուժից, առաջնորդւած հայրենա-

սիրական բուռն ու անխարդախ զգացմունքներով՝ բըռնում է իսկական յեղափոխականի անհրաժեշտ, ճակատագրական ուղին: Չմեռն անցնում է ուսու-պարսկական սահմանի վրայ գտնուղ ջուղա գիւղում, ուր՝ ճանապարհածախս հայթայթելու համար՝ ժամանակաւորապէս ուսուցչական պաշտօն է վարում: Հետեւեալ թւականի գարնանը՝ ճանապարհը շարունակելով, հասնում է Պարսկաստանի Սալմաստ գաւառը ու հաստատում Հաֆթուան գիւղում: Վերջինս այնուհետեւ գառնում է նրա սիրած կայանն ու հաւատարիմ ապաստանարանը:

Տակաւին յեղափոխութեան արշալոյսին, ապստամբական գործունէութեան սկզբի ժամանակներում զգացւում էր նպատակայարմար ու լաւագոյն աշխարհագրական գիրը ունեցող կենտրոնների կարևորութիւնը: Վաղոց ի վեր փնտուում էր մի տեղ, մի կէտ, ուր կարելի լինէր կենտրօնացնել յեղափոխական մեծաքանակ ոյժ, որտեղից կարելի լինէր հայրենիքի վտանգների րոպէին ցանկալի օժանդակութիւն ընձեռել: Թուխմախեանը իր քարոզական անդուլ գործունէութեան միջոցին անդադար շշտում էր Մաքուի խանութեան վրայ. Հաւատացած էր, որ միայն այդ խանութիւնը գնելով ու այդտեղ կենտրօնացնելով նորածին, տաքարիւն ուժերը՝ կարող կը լինէինք փոքր ի շատէ երաշխաւորել գործի աջող սկզբնաւորութիւնն ու յուսատու ընթացքը:

Գոլոշեանը այդ նպատակի համար կանգ առաւ Սալմաստի վրայ: Մի քանի ամիս այդտեղ մնալուց յետոյն առաջին անգամ մտնել այն երկրը ուր մշտնշնական արեան հոտ է բուրում. . . Ճանապարհին հազարումէկ նեղութիւններ կրելով քրդերից ու թիւքերից ծեծւելով, անարդւելով, վերջապէս հաս-

նում է վան, ուր, սակայն, կառավարութեան աչքին չզարնելու համար երկար չէ մնում ու շուտով իբրև ուխտաւոր, ուղևորւում է նախ վարագայ և ապա ու գրիգորի վանքը: Այստեղ առաւօտից մինչեւ երեկոյ աշխատում է իբրև հասարակ երկրագործ: Թէ կալ է կալում, թէ խոտ է հնձում և թէ արտ վարում:

Վանի երիտասարդները յաճախակի այցելում էին վերոյիշեալ վանքերը, ուր և առիթ էին ունենում շարունակ հանդիպել սկաչեայ, մտախոչ օտարականին: Այսպիսվ Գոլոշեան կամաց-կամաց մօտեցաւ հայութեան այդ կենսանակ տարրին ու սկսեց հէնց սրանց շրջանից գործադրել պրօպագանդիստի պաշտօնը: Ամենքի վրայ զիւթեական տպաւորութիւն էր թողնում ցնցոտիների, քոլոզի և պատառոսուն հանդերձների տակ թագնած այն վառվուն սիրաը, այն հուծէկու հայրենասիրական հոգին: Բայց այս բոլորը չէր կարող մոռացնել տալ իր անհատական ցաւերը, իր ընտանիքը, իր ծնողներին, որոնց նա հետեւեալ սրտաշարժ նամակն է ուղարկում Հայաստանի սրտից.

Ես առանց ձեր գիտութեան հեռացայ թիվլիսից, և այդ ի հարկէ ձեզ վշտացրեց: Ես մղում էի մի անյաղթելի ուժից և չէի կարող այլ կերպ վարուել... Ես ուրիշ թանկագին և հազուագիւտ բան չունիմ: Որ ուզարկեմ ձեզ ընդունեցէք ուրեմն, ձեր թշուառ Հայտաստանի տիրագին աւելակների ողջոյնը: Առ է իմ գանձը: Համբուրում եմ ինձանից տանջուած թշուառ մօրս: Մի՛ յուսահատուիր, քո՞ որդին միմիթարութիւն և յոյս պիտի լինի քեզ. Հաւատա՛ ինձ, հայրիկ! Հաւատա՛ քո՞ որդուն... . .

Վանի շրջականերում Գոլոշեանը մնաց մինչեւ առաջիկայ աշուն, այնուհետեւ նորից ճանապարհւեց գէպի Սալմաստի Հափթուան գիւղը: Կիւթական վիճակը անտանելի

էր. Համարեա թէ ուտելու հաց չունէր, դրա հետ  
միասին օգնութեան յոյս՝ ոչ մի տեղից: Շուտով, սակայն,  
երկու մասնաւոր դաս է գտնում, մինը Հավթուանում,  
միւսը՝ դրացի գիւղում: Չմեռային մահաշունչ ցրտերին,  
մաշւած զգեստներով ստիպւած էր մի գիւղից միւսը  
վազել անդադար: Հավթուանի ազգեցիկ ու հասակա-  
ւոր գիւղացիները չեն սիրում Գօլշեանին, որովհետև  
վերջինս միշտ խոյս էր տալիս նրանցից և ոչ մի կերպ  
հաճոյանալու ցցցեր չեր անում: Այս գժգոհութիւնը  
աւելի ևս սաստիկացաւ այն ժամանակ, երբ նա բողո-  
քականների մօտ մի քանի գասեր վերցրեց: „Ծածկա-  
միտ մարդ է, ասում էին, անպատճառ բողքական պիտի  
լինի“:

Գիւղի երիտասարդութիւնը, սակայն, պաշտում էր  
նրան: Յերեկը գասերով և ընթերցանութեամբ զբաղ-  
ւած Գօլշեան իր շուրջն էր հաւաքում երեկոները  
գիւղի երիտասարդ, վառվուն, լաւագոյն հակումերի  
տրամադիր ջահէլներին ու տենդային եռանդով ոգե-  
ւորւած շունչով յեղափոխական ոգի սերմանում նրանց  
մէջ: Խրախուսում էր լաւ զէնք գործածողներին, ուժեղ  
կազմուածք ունեցողներին: Նրա ուշքն ու միտքը կեն-  
տրօնանում էր այն բանի վրայ, թէ երբ պէտք է հայ-  
րենի լեռներն ու ձորերը թնդան հայ մարդկանց հրա-  
ցանների որոտից...

Բացւեց 1885 թւականի գարունը և Գօլշեանը  
սկսեց պատրաստութիւններ տեսնել իր Ճամբոր-  
դութեան համար: „Երբ գարունը ծնում է, գրում էր  
նա, և ջերեն սկսում են պղտորուել՝ պղտորուում է նաև  
իմ արիւնը. և ես անկարող եմ լինում գագար առնել“:  
Այդ միջոցին վանից Սալմաստ էր գնացել Մ. Փորթու-

դալեանը, որի հետ Գօլշեանը ծանօթացել էր տակաւին  
վան եղած ժամանակ: Երկար տեսակցութիւն է ունե-  
նում նրա հետ, պարզում է նրան իր անխախտ որոշումը  
— հայդուկային զինորական խումբ կաղմել պատել  
ամբողջ թիւբաց Հայաստանը, կռւել և զարթեցնել  
թմրած հայութիւնը: Փորթուգալեանը անչափ հաւա-  
նում է երիտասարդ գաղափարականի անդրգւելի, նւի-  
րական մտադրութիւնը ու խոստանում է օժանդակել  
նրան այդ գժուարին գործում, Վանի վիլայէմից տասը  
կտրիչ երիտասարդներ հանել և իրեն տալ: Գօլշեանը՝  
խրախուսւած այս խոստումներից՝ շտապում է Վան,  
սակայն չէ գտնում այնտեղ Փորթուգալեանին, որը ար-  
դէն հեռացրւած էր երկրից: Յուսահատւած, դառնա-  
ցած սրտով վերցնում է իր պանդխտութեան գաւա-  
ղանը և ուղերդում այս անգամ արդէն գէպի Մուշ և  
Տարօն: Մի քանի ամիս անընդհատ շրջագայելով այս  
կողմերում՝ նա նպատակ ունէր մօտիկից ուսումնասիրել  
այն ուժը, որ կարող էր արտադրել արհաւերքի վայր-  
կեաններին հայ ժողովուրդը, ճանաչել այն միջավայրը,  
այն պայմանները, որոնց մէջ պիտի գործէր նրա երազած  
հայդուկային խումբը, հասկանալ այն լեռների ու ձորերի  
հոգին, ուր առաջին անգամ պիտի հնէր հայ յեղա-  
փոխութեան որտագու մարտահրաւէրը: Տարօնից նա  
կրկին վերադառնում է և Վանի վրայով անցնում Շա-  
տախ՝ միենոյն պաշտօնով ու միենոյն նպատակով: Աշ-  
նանը Ճանապարհորդում է նորից գէպի Մալմաստ:

Սահմանին գեռ չհասած իջնում է մի հայ գիւ-  
ղում, ուր հէնց նոյն ժամին մտնում են 12 զինորներ,  
որոնցից վեցը հանգչելու են գնում Գօլշեանի հիւր  
եղած տանը: Չիերից իշնելուն պէս կատաղի հրաման

Են արձակում՝ ձիաներին գարի և խոտ տալ իսկ իրենց համար մի գառ մորթել՝ գիւղացին աշուգողով յայտնում է զինւորներին, որ գառ չունի, և խնդրում է թոյլ տալ հաւ մորթելու: Կրանք զայրանում և սկսում են հայհոյանքներ ու բոռնցքներ թափել խեղճ ու անօդական գիւղացու զլիին: Գոլոշեանը չէ համբերում և սկսում է առաջ ընկնել գէպի կատաղի զինւորները, յարձակւում է նրանց զրայ հայհոյանքներով ու ցնցուտիների տակից հանած կէու սրով: Զինւորները սկզբում ապուշ են կտրում, ապա խելքները ժողովելով սարսափելի կատաղութեամբ ձեռք են առնում Գոլոշեանին ու պատրաստում պատառ պատառ անելու նրան: Գիւղացիները, սակայն, միջամտում են և հազիւ հազ ազատում հայութեան ըմբռստ զաւակին գազանների ձեռքից:

Քիչ ժամանակ է անցնում և ջարդւած ձանապարհորդը երկար ըջագայութիւնից յետոյ ինքզինը դըտնում է զարձեալ Սալմաստի Հաֆթմուան գիւղում՝ իրեն անդորրութիւն խոստացող այդ սիրելի կայարանում: Այդտեղ երկու ամիս պարապ է մնում և այնուհետեւ մի ամբողջ տարւայ չափ նեիրում է իրան կըրթական գործին: Գիւղացիները, որոնք սկզբում այնքան դժգոհութեամբ ու անվստահութեամբ էին վերաբերում նրան՝ սկսում են կամացհամաց ձանաչել այդ իսկական, անձնուրաց, ժողովրդաւոր գործիչին ու անչափ համակել սիրել նրան: Շուտով համայնքի ընդհանուր համաձայնութեամբ Գոլոշեանը ժողովրդական ուսումնարանի գլխաւոր ուսուցիչ է կարգւում: Այդ ասպարիզում նրա մատուցած ծառայութիւնը վերին աստիճանի հրահանգիչ է և յիշատակելի: Մեծ կրթութիւն շտացած, եւրոպական համալսարաններում չուսած՝

նա այնուամենայնիւ իր բնական խելքով ու ինքնածին մանկավարժական ձիրքի շնորհիւ կարողացաւ կերպարանափոխել Սալմաստի կրթական գործը: Քարացած գրաբարեան ուսմունքը, բթացնող ու աշակերտի հոգին այլանդակող Տէր-Թօգիկեան մանկավարժութիւնը, ամեն հերոսութիւն ու ամեն անկախութիւն մեոցնող սարսափին ու ծեծը, երկիւղն ու „օրհնեալ“ փայտը, որոնք մինչև Գոլոշեան այդ գպրոցներում ընդունած ու սրբագործւած միջոցները էին՝ սրա օրով այնքան յաջողութեամբ ու այնքան դիւրութեամբ տեղի տվին մանկավարժական աւելի աղնիւ, աւելի խելահաս, աւելի արդիւնաւոր եղանակների:

1886 թուականի աշնուն, Գոլոշեանի անդուլշանքերով բացում է Հաֆթուան գիւղում Գրասիրաց Ընկերութիւնը և Կենտրօնական գրադարան-ընթերցարանը, որոնց միակ հոգի և մարմին տուողը, միակ պահապանը ինքնեղաւ այնքան հոգատարութեամբ:

Այսպիսով անցնում է 1886-ի ձմեռը և մօտենում՝ 87-ի գարդենը գարձեալ պղտորւում է Գոլոշեանի արիւնը: Հայրենիքի կարօտը, ծնողներին տեսնելու ցանկութիւնը ու մանսաւանդ նոր ընկերներ գտնելու անհրաժեշտութիւնը այս անգամ նրան թիֆլիսի ձանապարհի վրայ են կանգնեցնում:

#### ¶.

Մի վառվառն տրամադրութիւն էր տիրում այդ թւականին կովկասեան մայրաքաղաքում: Երիտասարդութիւնը, մատաղ, դեռատի կեանքերը՝ յոգնած հրապարակի անդորժութիւնից, ձանձրացած երկարժամանակեայ հանգստից՝ շարժւելու մի բնական, անդիմազրելի պահանջ էին



զգում: Աչքերը յառած դէպի ամեն լուսաւոր երկոյթ, ականջները ուղղած դէպի ամեն յօւսատու ձայն, ամենքը սրտատրոփ սպասում էին գալիք արշալոյսներին: Համալսարանական հեռաւոր քաղաքներից գալիս էին երիտասարդական թարմ ու ոգեսորւած ուժեր և պրօպագանդ էին անում իրենց հայրենակիցների մէջ: Մի այսպիսի հետաքրքիր ժամանակաշրջանում էր, որ Գօլօշեան ոտք գրեց Թիֆլիս: Հայաստանում ապրած ու փորձւած, հայ ժողովորդի իրական կարիքներին խոր կերպով տեղեակ ճանապարհորդ յեղափոխականը՝ վերին աստիճանի հետաքրքրական մի դէմք էր ուրեմն, գործունեութեան ծարաւն ու գաղափարների քաղցը ունեցող Թիֆլիսի երիտասարդութեան համար: Եւ յերաւի, նա իր հետ բերեց մի պայծառ սկզբնաւորութիւն: Անմիջապէս գլխին ժողովնեց վառվուն, տպաւորւող երիտասարդներին ու սկսեց պատմել հայի մեծ ցաւը, ժողովրդի երկունքը: Բեկեռւած ունկնդիրների առաջ, ամբողջովին ոգեսորութիւն գարձած, երիտասարդ գործիչը վերջ ի վերջ գալիս կանգնում էր փրկութեան միակ միջօցի վրայ, որ կարող է երաշխաւորել հայի ապագան, որ ընդունակ է արցունեներ չորացնել—մտնել թիւրքիա, գործել վիրաւոր ու արնաքամ ժողովորդի մէջ, զինել կուելու յարմարութիւն տալ յուսահատւած հայութեան:

Այս կենդանարար ժողովների ընթացքում հինգ ընկեր հրացանի և գաշոյնի վրայ հանդիսաւորապէս երգւեցին ամեն ինչ զոհել հարենիքի փրկութեան սեղանին ու անմիջապէս ճանապարհւել դէպի արիւնի երկիրը:

Այս շրջանում անտանելի կերպով դառն է մեր հեռոսի հոգեկան դրութիւնը: Միշտ մուայլ միշտ ենթակայ ծանր ու գժւարալոյն խնդիրների մաշող ազգեցութեան:

Նրա մէջ մի կատաղի կորիւ կար, երկու զգացմունքների մի ուժգին մենամարտ:

Դժբախտ մօր ուրախութիւնը շատ կարճատէ եղաւ: Որդու յարատև միջնած կերպարանքը ընտանիքի նկատմամբ ցուցած անտարբերութիւնը, զանազան խորհրդաւոր մարդկանց հետ ունեցած մշտական տեսակցութիւնները, գիշերային ուշ վերադարձները, միշտ կենարօնացած, միշտ մտախոյն, արտայայտութիւնը վատ, սարսափելի անակնկալներ էին պատմում մայրական արթուն բնազդին ու տարաբախտ մայրը աննկարագրելի սոսկումով էր զգում, որ իր թանկագին զաւակը երկար չպիտի մնայ հայրական յարկի տակ: Ու ինչքան էլ Գօլօշեան թաքցնէր իր ներքինը ինչքան էլ պաղարիւն և հանգիստ ձեանար՝ այնուամենայնիւ մայրը, ամբողջովին նեարգերից ու զգացմունքներից կազմւած այդ տարօրինակ գոյութիւնը, շատ սև բաների մասին էր մտածում: Մօր այս անհունապէս եղերական վիճակը, հարազատ ծնողի այս թրչւած ցաւագին աչքերը հանգիստ չէին տալիս զգայուն որդուն:

Ներքին կորիւ մի անհունականի ուժգնութեան հասու, երկու հաւասարապէս բնական ու արդար զգացմունքների մենամարտը մի տարօրինակ կերպարանք ստացաւ: Գօլօշեան հեռում էր ներքին այդ գժնդակ պատերազմի մէջ Ի՞նչ անել, ո՞րն ընտրել... Մի կողմից մայրը, արիւնակից, հարազատ ծնողը, միւս կողմից հարիւրաւոր այլ ծնողներ, հազարաւոր գժբախտ մայրեր, դէմքերը արիւնած, այնտեղ լայն ու քարքարոտ ճամբաների վրայ փախչում են հեիշե, մազերը խորիւ, ոտքերը բորիկ. փախչում են սուխների առաջից, մոխիրների միջից և օգնութիւն են աղաղակում... .

Գօլօշեան օգնութեան կանչեց իր երկաթէ կամքը

յետ մղելու համար ընտանեկան զգացմունքները յանուն աւելի մեծ գործի: Ու կրկին թողեց հայրենի տունը և այս անգամ ընդմիշտ... թիֆլիսում անցկացրած վերջին օրերի հոգեկան ներքին կուրլ նա արտայատել է հօր հասցեին թողած յետեւալ սրտաշարժ և նշանակալից նամակի մէջ.

..... Սիրտս չէ տալիս գրել բայց պէտք է գրեմ, պէտք է իմացնեմ իմ դիտաւորութիւնը: Երկու զգացմունքի մէջ եմ եղել վերջին հինգ տարիներում կամ ընտանիքը զոհել հայրենիքին և կամ հակառակը անել: Ընտանեկան և ապա շրջանի կրթութիւնը ինձ հարկադրում է անել առաջնորդու և ես վճռեցի զոհել ամեն ինչ հայրենիքի համար. ես որոշեցի լինել ապերախտ որդի տանջանք պատճառող զաւակ:

Հայի զաւակի տիռուր ձաւ կատագիրը ըստ է... Ես անկարող եմ զգում անտես անել հայրենիքի շահերը իսկ այդ շահերին անձնատուր լինելով ձեզ մեծ գժբախտութիւն եմ հասցնում:

Ես որոշեցի ձեզ գժբախտութիւն տալ որպէսզի շատ ընտանիքների արտասուբք սրբել կարողանամ: Երբ ես եկայ թիֆլիս՝ երկու միտք ունեի. նախ տեսնել ձեզ և ազգականներիս և ապա՝ գտնել գաղափարակից մարդիկ: Ես ունեցայ բազմաթիւ ծանօթներ, որոնց մէջ յշս ունեի ազնուութիւն և հայրենասիրութիւն գտնել: Կարծում էի, թէ դրանցից գոնէ մի քանիսը ձշմարիտ հայ կը լինեն: Ես բաժանեցի դրանցից ծանր սրտավ որովհետեւ հայրենիքի սէր չկար դրանց մէջ: Ես գնում եմ այնաեղ ուր ինձ համար գործ կաց, ուր ես կարող եմ օգուտ տալ ես գնում եմ թիւրքաց հայաստան: Անիծել կարող էք, ծնողներս բայց և կարող էք օրհնել կարօտ եմ ձեր օրհնութեան, սիրելիներ: Թող ձեզ միտք միտթարէ գոնէ այն հանգամանքը, որ ես անբարոյական կամ անսառակ զաւակ չեմ: Իմ յիշողութիւնից բնաւ դուրս չէ գալու ձեր սէրը: Յաւեսութիւն, ցտեսութիւն, արդեօք երկինքը այնքան

բարի կ'լինի, որ խղճայ ձեզ և մեզ նորէն միմեանց տեսլեան արժանացնէ: Մօրս ամեն փորձանքների մէջ կը յիշեմ: որ ինձ ոյժ առաջ դիմագրելու: Նրա յիշատակը և քո սէրը հայր, կը պահպանեն ինձ... .

Ու այսպէս 1888 թւականի յուրիս ամսին, երկու նոր ընկերներ առնելով իր հետ՝ զինւած, Մասիսի արևմտաշիւսիսային ստորոտից մանում է Հայաստան: Անցնում է Վանի վիլայեթը, մանում բաղէց երկար քարոզում և ապա նորից յետ է դառնում ու Վանի վրայով Պարսկաստան մանում: Իր կեանքի պահ շրջանում Գոլօշեան հանդիպում է Յովհաննէս և գրի առաջ անձնելու յեղափականին, որի վերջն օրերը անխղելի կերպով կապւած են իր օրերի հետ: Աւելորդ չէ, ուրեմն, մի փոքրիկ փակագիծ բանալ՝ համառօտակի նկարագրելու համար Ագրիպասեանի փողորկալի կեանքը:

¶.

Ծննդեան թւականը ճշգրտորէն մեղ յայտնի չէ. իր անձնական բարեկամ՝ պ. Մ. Ն., որ բաւականաչափ ծանօթ է նրա կեանքին և որից մենք առել ենք մի քանի անշրաժեցած տեղեկութիւններ՝ առում է, թէ Ագրիպասեան 1886 թւականին „հազիւ քսան տարեկան երիտասարդ մը լինէր“: Այդ հաշով, ծնւած պիտի լինի, ուրեմն, մօտաւորապէս 1866 թւին, համարեաթէ հասակակից իր սիրելի ընկեր Գոլօշեանին: Հայրը, բաւական հարուստ և բարեկեցիկ վիճակի տէր՝ իր ժամանակի լաւ հոգիներից մինն էր, համակիր և աջակից Խրիմեանի գործունէութեան, նրա հայրենասիրական խանդապառ պրօպագանդին: Յայտնի էր իր անկեղծ ու անկաշկանդ ոգով մաքուր բնաւորութեամբ

ու անընկճելի կամքով, որ սակայն, գժբախտաբար, չկարողացաւ գործադրել իր հայրենիքի օգտին աւելի երկար ժամանակ։ Մի օր, երբ Արծակից Վան էր վերադառնում՝ բոնւեց քրդերից, բարբարոսական տանջանքների ենթարկւեց ու շարաշար կերպով սպանւեց՝ անտեր ու անպաշտպան թողնելով իր այրին՝ մի քանի աղջկանց և երեք արու զաւակների հետ։ Հօր սպանութիւնից յետոյ նախկին բարեկեցիկ ընտանիքը մի քանի օրւայ մէջ սոսկալի աղքատութեան մատնւեց։ Մանուկների պահպանութեան ու դաստիարակութեան հոգսը ծանրացաւ պարկեց ու իրենց հօր լաւագոյն բարեկամ Խրիմեան Հայրիկի վրայ, որը չթերացաւ կատարել ընկերական և բարեկամական պարտականութիւնը։

Յովհաննէս Ագրիպասեան իր եղբայրների մէջ կրտսերը լինելով հանգերձ՝ ամենից քաջն ու ամենից գործունեան հանդիսացաւ։ Սակայն հարկաւոր է յիշատակել, որ իրանից մեծ եղբայրն ևս, Կարապետ Ագրիպասեան, ապրեց նոյն ճանապարհի վրայ ու մեռաւ թըրական և ռուսական բանտերում ստացած թոքախտից։

Յովհաննէս իր մանկական կրթութիւնը ստացաւ Աւրագի և Յայնկոյների գպրոցներում ու սովորեց այնքան, որքան կարելի էր այն „երանելի“ ժամանակներում Բայց ինչոր պակաս էին թողնում ուսուցիչները՝ Խրիմեանն էր լրացնում։ Այսպէս նա մեծացաւ գարձաւ երիտասարդ։

Ժամանակները փոխւել էին. Հայաստանի գլխից անսպիր բաներ էին անցնում։ Խրիմեանի պատրիարքութեան օրերն էին, որոնց հետեւց ուսութըրական պատերազմը։ Ագեստութեան և զարթնումի աղնիւ, տենդու օրեր էին... Ա. Պօլիսը, որ երկար տարիներից

ի վեր իսուլ ու համբ էր մնացել Հայաստանում՝ կատարւող դաւերի ու ոճիրների հանգեպ, այժմ զարմանալի եռանդով գործի էր կացել Հայրիկի, Ամրծապետանի և ուրիշների բարձր ներշնչումների տակ, պետականի և ուրիշների արձրութիւնը մի ուժգին տրամադրութեամբ նետել էր գործի սապարէզ։ Գործունէութեան թագատակը հայաստանցին պիտի լինէր։ Խրիմեան 80-ական թւականների սկզբին գէպի Վան ուղևորւեց՝ տառապած ժողովրդին յուսագրելուն Համար։ Միացեալ և Երարտատեան գպրոցների ցանցով պատել էին երկիրը նրանց մէջ ամենագործունեան՝ Փորթուգալիանի եռանգույն տեսչութեան տակ գանւող Վանի վարժապետանոցը հանդիսացաւ։ Ագրիպասեան այս գպրոցի անդրանիկ և ամենից արդինաւոր սանը եղաւ։ Գժբախտաբար յիշեալ վարժապետանոցը երկու տարի միայն գոյութիւն ունեցաւ, սակայն այդքան կարճ ժամանակակիցում անդամ կարողացաւ հիմնովին փոփոխել Վանի մէջ տիրող մթնոլորտը։ Երեան եկաւ մի երիտասարդութիւն՝ տոգորւած աղնիւ թուիչներով նոր պահանջների գիտակցութեամբ։ Ագրիպասեանի համար այս զարթնումը ճակատագրականօրէն նշանաւոր եղաւ։ Ասոր նենցութեան զո՞ս իր տարաբախս հօր արդար վոէժը, որից նա այրուում էր մանուկ հասակից սկսած՝ հետզետ միացաւ արենակիցների հաւասարագէս արդար վոէժին ու անհատական վոէժին դրուել վերածւեց մի Ընդհանուր, աւելի ուժգին վոէժին դրուեց։

Ապրժապետանոցի փակումից յետոյ, Ագրիպասեան Հայրիկի յանձնարարութեամբ Մուշ ուղարկւեց, այնտեղ Առաքելոց վանքում շարունակելու իր թերի ուսումը։ Ասկայն վանքի պատերը շատ նեղ ու խեղջուկ թւացին

անհանգիստ ու սաղմիկ բնաւորութիւն ունեցող երիտասարդին, որ շուտով վան վերադարձաւ ու շարունակեց ուսանել Փորթուգալեանի նախաձեռնութեամբ հիմնած կենտրօնական վարժարանի մէջ: Գպրոցական շրջանից յետոյ՝ Ագրիպասեան անմիջապէս սկսում է նորածին Հայրենասիրական Հոսանքի ուղղութեամբ ընթանալ: Շուտով կառավարութեան հետապնդումներին ենթարկեց ու թրբական բանտերից լաւագոյն համարելով պանդիստութիւնը՝ թողեց Հայրենի Վան քաղաքը և ուղևորւեց Կովկաս, ուր ապրում էր տարիներից ի վեր իր մեծ եղբայրը: Քիչ յետոյ այս կեանքը ևս անտառելի դարձաւ գործի եռանդ ունեցող Ագրիպասեանի համար ու թողեց եղբօրը, համեստ քարոզչի պաշտօնով երկիր մտաւ՝ Տարօնի և Ասպուրականի իր ծանօթ բազմաթիւ երիտասարդների մէջ յեղափոխական ոգին արծարծելու համար: Մի քանի տարւայ ընթացքում ոտքի տակ տւեց ամբողջ թիւքքաց-Հայաստանը: Եղաւ Վանի նահանգում, Բաղէշում, Սասունում, Մուշում, Բուլանըխում, Վլաշկերտում, Կարինում և ուրիշ շատ տեղեր: Ամենուրիք վինտում էր Հայութեան գժգոհ, ըմբոստ Հոգիներին: Ագրիպասեանի սիրելի Կայարանը Բուլանըխն էր, ուր Հանգստանում էր նա երկար, ցաւագին թափառումներից յետոյ, ուր անցնում էր իր կեանքի մի քանի մեղմ, կարճատև վայրկեանները: Կիւթական ամեն տեսակ միջոցներից զուրկ էր նա, բայց ապրում էր անկախ, առանց ուրիշների վրայ ծանրանալու: Ուներ մի կիսամաշ սպիտակ տոպրակ, որ ճանապարհ ընկնելու ժամանակ միշտ ձգում էր իր բարեկամների առաջ ու Հանգարտ ասում: „Մի քանի Հաց դրէք տոպրակս“ ապա Խաչաձե կապում էր մէջքը, անբաժան սուրն էլ թագ-

ցնում՝ իր մերկ մարմի վրայ ու ճանապարհ ընկնում գէպի ցաւոս, տառապող անկիւնները, գէպի հայութեան արիւնոտ խորչերը՝ վառելու համար թոյլ ու թմրած հոդիները: Հագնում էր բոլորպին Տաճկաստանի աղքաների նման: Ուներ և մի ուրիշ թանկագին բան—կաշէ մի փոքրիկ տոպրակ, որ միշտ քաշ էր ընկած նրա ձախ ուսից և որի մէջ էին գտնուում նրա ապրուստի միջոցները՝ մազտաք, թել, ասեղ կոճակներ և այլն: Հետը շարունակ պահում էր նաև մի մատնոց ու մի բիզ՝ այստեղայնտեղ ոտնաման կարկատելու՝ իր օրական պարէնը Հայթայթելու համար: Անընդհատ շրջագայութեան միջոցին երբ նկատում էր, որ մի որեւէ գիւղում գործ կարելի է տեսնել իսկոյն Հնակարկատի արհեստով նստում էր այնտեղ զարմանալի եռանդով՝ գործի կապում կարճ ժամանակի ընթացքում վերջացնում անհրաժեշտը ու թուիչք տալով նորից առաջ անցնում: Կառավարութիւնը ամենուրիք հետապնդում էր նրան, սակայն խելացի ու յանդուգն Ագրիպասեան միշտ կարողանում էր խուսափել կառավարական թակարդից: Կամ ճշմարիտ յեղափոխական տիպ էր, փորձւած մըրը-կալի կեանքի հնոցում, կրակով ու մուրճով: Ահա սրան է Հանգիպում Գոլօշեան իր կեանքի վերջին տարում, վարագոյրի եռել թագնւած այս անկեղծ գործիչն: Փակագիծը փակենք:

Ե.

Գոլօշեանի վերադարձի լուրը կայծակի արագութեամբ տարածւեց Հաֆթուանում ու անօրինակ Հաճորը պատճառեց իր ընկերներին, որոնք այնքան անհամբերութեամբ սպասում էին նրան: Ամենից շատ

ուրախ էր Ագրիպասեան, որ այնքան լսել էր Գօլօշեանի անձնուէր գործունէութեան մասին և այնքան համակւել էր նրան տեսնելու քաղցր երազանքով: Ու առաջին անգամ իրար հանդիպելիս՝ երկուսը միասին, ասես, մի գերբնական ներշնչումով ճանաչեցին իրար, սեղմեցին իրար ձեռք և բարեկամուկան գրկախառնումների մէջ՝ խոստացան մինչև մահ անբաժան ընկեր միալ:

Գօլօշեան ձեռք առաւ իր նախկին արդիւնաւէտ պաշտօնը Հաֆթուսնի գպրոցում՝ մի վանեցի երիտասարդ ուսուցչի հետ: Երկուսը միասին զեկավարում էին մասնուկների կրթութիւնը, իսկ Ագրիպասեան մօտակայ փոքրիկ քաղաքներից մէկում զինագործութիւն էր սովորում: Զարմանալի ընդունակութիւն ունէր այս արհեստը ըմբռնելու: Վեց տասից յետոյ նա արդէն կարողացաւ իր համար մի լաւ մարտինի հրացան շինել:

Ագրիպասեան ամեն կերպ աշխատում էր նպաստել Գօլօշեանի ձեռնարկներին: Գպրոցի վերաբացումից մի քանի օր յետոյ՝ կարիք զգացւեց մարդ ուղարկել Թաւրիկ՝ առաջնորդին մի քանի բացատրութիւններ տալու համար: Ամենքը մնացել էին շւարած. Ագրիպասեան լսեց արդ բանը, վերցրեց իր հինաւուրց պարկը ու հանդարտ կերպով արտասանեց իր սովորական խօսքերը: „Մի քանի հաց դրէք տոսպրակօ“: Պարկը մէջքին կապեց ու արկը մար մտնելուց՝ ճանապարհ ընկաւ: 3-4 օրւայ տարածութիւնը նա ոտով կտրեց ընդամենը մէկ ու կէս օրւայ մէջ:

Գօլօշեան վերջին անգամ՝ թիւբաց-Հայաստանով անցնելիս՝ Ամսի նահանգի գիւղերից մինում, մի հայ պաշտօնեալի մօտ պահ էր տւել Կովկասում նւէր ստացած իր հրացանը: Աերջինս անհրաժեշտ էր առաջիկայ

գարնան համար: Պէտք է բերւէր Գօլօշեանի հրացանը: Ու Ագրիպասեան առանց այլկայլի վերցրեց իր անբաժան տոսպրակը և աշնանային վատ, անձրեսո եղանակին ճանապարհ ընկաւ:

Այս անգամւայ Ճամբորդութիւնը, սակայն, անաջող անցաւ: Ագրիպասեան ձեռնունայն վերագարձաւ պաշտօնեան սեփականացրել էր հրացանը: Այսպիսի մտերիմ, ընկերական կապերով էին կապւած երկու երիտասարդները . . .

1888-ի ձեռն էլ անցաւ: բացւեց 89-ի գարունը ջերը գարձեալ պղտուեցին: Գօլօշեանցի արիւնը նորից սկսեց ուժգին թափով շարժւել երակներում: Այլևս հանգիստ նստել անկարելի էր. առաւապանը երկրում արցունքները շատ էին առատ, հառաչանքները շատ էին խոր ու անյայս. . . թիւբաց-Հայաստանում մշտական ու կանոնաւոր գործունէութիւն սկսելու ստիպողական անհրաժեշտութիւն էր զգացում: Աերջնական նախագիծը արդէն որոշւած էր. գնալ թիւբիս, ժողովել բոլոր ըմբռու ու անհանգիստ հոգիներին ու հայդուկային խմբեր կազմել՝ սկսելու համար արիւնու, Ճակատագրական կուիւը. . .

Մի հրացան արդէն շինւած էր. հարկաւոր էին էլի երկուսը՝ մինը Գօլօշեանի, միւսը վանեցի երիտասարդի համար: Այդ նպատակով թաւրիկ գնացին, բոլոր անհրաժեշտ իրերը առան, բոլոր կարևոր տեղեկութիւնները ստացան ու ճանապարհ ընկան դէպի Հաֆթուսն:

Ամեն բան արդէն պատրաստ էր:

Հօր հասցէին թողած հրաժեշտ համակում, Գօլօշեան հանգամանօրէն բացատրելով իր նպատակն ու բռու-

Նած ընթացքը՝ ի միջի այլոց հետևեալ խօսերն է ասում.

Ես չգիտեմ թէ որքան կը յաջողւի մեր նպատակը: Գուցէ մենք ընկնենք շուտով և շատ շուտով: Բայց մեր անկումը պիտի որբիշներին յուզէ, և մենք շատերին օրինակ կը լինենք մեր գործունէութեամբ: Համոզւած եղիր հայր Թիւրբիան պիտի ընկնի և տառապեալ հայութիւնը պիտի ոտքի կանգնէ: Դու մի անխուսափելի անցք է, որի իրականացումը մօտիկ ապագայում տեսնելու է հայութիւնը:

Մօտիկ ընկերոջ հասցէին թողած մի այլ նամակում՝ Գօլոշեան հետևեալ խօստումն է անում.

„Մենք միշտ հաւատարիմ կը մնանք մեր գործին և մեր գաղափարին. մեր սկսածը գլուխ կը տանենք, քանի մեր երաշներում կը լինի արեան մի կաթիլ և քանի շունչներս չի կարո՞ւ...“

Համոզւած, անխարդախ յեղափոխականի մաքուր, հերոսական հոգին է ամփոփւած այս տողերի մէջ. . . Աւ մայիսեան մի գեղեցիկ օր՝ երեք ընկերները զինւած դուրս եկան Հաֆթուանից, Ճանապարհ ընկան դէպի արիւնների աղբերը: Որոշել էին դիշերները ճանապարհորդել ցերեկները քնել:

Յաջորդ օրը անվտանգ անցաւ. իսկ միւս օրը, երեկոյեան դէմ յոգնած ու ծարաւ, իջան Զուխ-Կէտուկ անուն կրող յայտնի կիրճը՝ Սպիտակ աղբերից ջուր խմելու, հաց ուտելու և փոքր ինչ հանգստանալու: Կոյն ժամին աղբերից ոչ այնքան հեռու երեացին մի քանի զապթիաներ, որոնք ուղեկցում էին մի թիւրք պաշտօնեաի ընտանիքնն: Ճանապարհի վրայ, ուշ երեկոյեան զինւած մարդիկ տեսնելով՝ զապթիաները խկոյն կասկածում են: Երկու կողմից խօսակցութիւն է բացւում, որի ժամանակ աղերքը

աշխատում են կամաց-կամաց յետ քաշւել դէպի ձախակողմեան քարքարոս սարը: Զապթիաները սկսում են հրացան արձակել երեք ընկերները շատ են աշխատում ընդհարման առիթ չտալ: Սակայն տեսնելով, որ զապթիաները նպատակ են դրել իրենց անպատճառ վեասել, իրենք ես մի-մի քար են բռնում ու սկսում գլուխներով պատասխանել նրանց: Գօլոշեան և Ագրիպասեան միմեանց բաւական մօտ են լինում, իսկ վանեցի երիտասարդը՝ սարի կատարին: Երկու ընկերները՝ իրենց ետեւ պաշտպանած կարծելով՝ վստահութեամբ գիմագրում են զինւորների բոլոր յարձակումներին: Զապթիաները ամեն ջանք գործ են գնում շըջապատելու մերանց, իսկ կարիք Ագրիպասեան՝ լաւ հասկանալով նրանց մտագրութիւնը՝ աշխատում է ամեն կերպ իրանգարել նրանց: Ամբողջովին կրակ դարձած, վայրի այծի նման թռչում էր նա մէկ բարից միւսը և սիրտ էր տալիս իր սիրելի Գօլոշեանին: Զապթիաները ճանաչեցին Ագրիպասեանի փորձառութիւնը և սկսեցին իրենց ամբողջ ուժը կենարօնացնել Գօլոշեանի վրայ, որ արդէն վերը էր ստացել ոտքից: Ագրիպասեան շատ նեղ վիճակի մէջ էր. շարունակ իր դիրքը փոխելով՝ պահապան հրեշտակի նման Գօլոշեանի շուրջն էր պտտում: Այն ժամանակ զապթիաներից մի քանիսը բարձրանում են սարը, որտեղից արդէն հեռացել էր վանեցի երիտասարդը. որոտում՝ է հրացանը և քաջ Ագրիպասեան մի վայրկեանում գետին է գլորում: Քիչ յետոյ Գօլոշեանն էլ մի նոր ու վտանգաւոր վերը ևս ստանալով՝ ուշամտափ փուռում է քարերի մէջ. . .

Միւս առաւօտ պատահած դէպի մասին լուր է ուղարկում թէ Աշան և թէ մօտակայ իշխանութեանը:

Աստիկանութիւնը նոյն զապթիաների հետ միասին գալիս է գեղքի վայրը՝ քննելու և դիտները որոնելու։ Գօլոշեան, որ արգէն ուշըի էր եկել և որ սակայն ծանր վէրքի պատճառով անկարող էր տեղից ելնել՝ յուսահատական շարժում է անում և զապթիաներից մէկին որով վիրաւորում։ Կատաղած գաղանները թափում են վրան և հրացանների կոթերով ու քարերով գլուխը ջախջախում։

Դէպքը իր ժամանակին բաւական աղմուկ հանեց. Անի կուսակալ Խոալի բէյ հեռագրով սուլթանին տեղեկագրեց Չուխ-Աէտուկի ընդհարման մասին։ Խըը օսմանիէ ականակուռ պատւանշանով պարգևատրւեց, իսկ իր հեռագիրը տպւեց Կ. Պօլսի լրագիրներում։ Հեռագրի մէջ պատւած է մի յիշատակարանի մասին, որ գտնւած է զոհերից մինի գրանում և որ այսպէս էր բացատրում Խմբի կազմութեան պատճառը. „Տասն և իններորդ գարում ապրող մարդու համար ազատութիւնից զատ ուրիշ մէնողորտ չկայ, որի մէջ կարելի լինի շնչել։ Ու յետոյ ասւած է. „Ուրախութեամբ կերթամ մեռնելու, իսկ դու, քաղցր հայրենիք, որբիր արցունք և ինձ համար սուկ մի բռնիր“...

Այսպէս ընկան հայ ազատագրական շարժման անդրանիկ զինւորները. և այնուհետև ճանապարհը բացւեց, գործի հիմքը գրւեց։ Հայութիւնը թանձր, անթափանցիկ սկերի միջից գլուխը յոգնածօրէն վեր բարձրացրեց և սկսեց անհանգիստ հեքով ու տենդոտ շունչով ընդնշարել հեռաւոր այն արշալոյները, որոնք կամաց կամաց գեղի մեր արիւնոտ ու ցաւագին երկիրն են գալիս:

Հայաստակի Ազգային գրադարան



NL0428123

ՀՈՅԱԿԱՆ ՖՈՒՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	Մանտիմ
1. Ապստամբական ռդի (սպառւած) . . . . .	10
2. Յեղափոխական կեանքից (սպառւած) . . . . .	5
3. Գաղտնի տպարան (սպառւած) . . . . .	5
4. Գիտական սօցիալիզմ Փ. Էնգելս . . . . .	40
5. Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր . . . . .	—
6. Կուկունեանի խմբի արշաւանքը . . . . .	20
7. Կարնոյ յիշատակին (չորս հատւած). . . . .	50
8. Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիր . . . . .	—
9. Քըքիջներ, Homo homini lupus, Վարդգէս,	20
10. Երիտասարդներին, Պ. Կրապօտկին. . . . .	20
11. Ազատութեան ճնպրհին, Ղարիբ, Ա. գլքոյկ	30
12. Ազատութեան ճնպրհին. " Բ. " . . . . .	60
13. Ամբոխային տրամաբանութիւն. . . . .	50
14. Ազատութեան ճնպրհին, Ղարիբ, Գ. գլքոյկ	30
15. Հայաստան և Մակեդոնիա . . . . .	50
16. Կովկասեան Վէրքեր, Է. Ակնունի. . . . .	3 Փրանկ
17. Հայրենիքի գաղափարը, Մ. Վարանդեան. 1	"
18. Կազմակերպական կանոններ . . . . .	—
19. Դէպի կոիւ, Է. Ակնունի . . . . .	2 Փրանկ
Կովկաս՝ 1 բուբլի, Ամերիկա՝ $\frac{1}{2}$ դօլ.	
20. Յեղափոխականներ   Վարդան Գօլօշեան Յ. Ազրիպասեան . . . . .	20 մ.